ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՅԻՍԻ 2025 թվականի N 0579-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով,որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի 04-001-0074- կադաստրային ծածկագրից հողամասում գտնվող 28,8 քմ մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողերում Հայկ Սերոժի Մանսուրյանի կողմից կառուցված 25,4 քմ ներքին և 28,8 քմ արտաքին մակերեսով սպասարկման օբյեկտի տարածքի /մեկ հարկանի/ ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով,որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին,ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով, 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանդրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի հ. 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 34-րդ կետով, 35-րդ կետի «բ» ենթակետով, 35.1-րդ,36-րդ կետերով, ՀՀ Կառավարության 2011 թվականի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով կառույցն ինքնակամ իրականացրած ֆիզիկական անձ Հայկ Սերոժի Մանսուրյանի 09.12.2024թ. թիվ 6770 դիմումը և դրան կից ներկայացրած փաստաթղթերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Արարատյան փողոց 3-րդ շենք հասցեին կից գտնվող 28,8 քմ մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված՝ սպասարկման օբյեկտը՝ 28,8 քմ արտաքին և 25,4 քմ ներքին մակերեսով /ստորև նաև գույք/, համարել Արմավիր համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական /կցվում է հողամասի հատակագիծն ու շինության բնութագիրը/:

2. Գույքի նկատմամբ պետական գրանցում կատարելուց հետո գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած Հայկ Սերոժի Մանսուրյանին:

3. Արմավիր համայնքին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող 04-001-0074- կադաստրային ծածկագրից գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանին Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, Արմավիր քաղաք, Արարատյան փողոց,3/3 շինություն:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր, քաղաք, Արարատյան փողոց,3/3 հասցեում գտնվող գույքի հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023F6E635:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. մայիսի 02
ք. Արմավիր